«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում>>:

Դաստիարակ՝ ՎԻԿՏՈՐԻԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Մանկապարտեզ՝ ԳՅՈՒՄՐՈՒ « ՄԱՆԿԻԿ-ՄՍՈՒՐ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3-4

Գլուխ 1. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում 5-10

Գլուխ 2. Հետազոտության ընթացք 11-13

Եզրակացություն 14-15

Օգտագործված գրականություն 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է :

Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է հոգեբաններին և մանկավարժներին:

Խաղի հատկությունները ամրապնդվում են սկսած վաղ մանկության շրջանից, որտեղ երեխայի առաջատար գործունեության ձևը խաղն է: Երեխան զարգանում է խաղում և խաղի միջոցով, և որքան էլ ուսումնասիրված լինի խաղային գործունեությունը այն միևնույնն է արդիական է, քանի որ յուրաքանչյուր երեխա խաղի մեջ ինքնադրսևորվում է ուրույն ձևով: Եվ հենց սրանում է կայանում մեր թեմայի արդիականությունը:

Աշխատանքի վերնագիրն է՝ <<Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում>>:

Հետազոտության թեմայի **արդիկանությունը**. Այս հետազոտության թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի

փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում:

Հետազոտության **նպատակը.** Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Վարկած. Ենթադրվում է, որ մանկապարտեզում ձևավորվում է դերային խաղը երեխաների զարգացման փուլում: Յուրաքնչյուր երեխան գործում է ինքնուրույն, արտահայտելով իր ներքին էմոցիաները:

Գլուխ 1

Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Մարդու կյանքի յուրաքանչյուր փուլ ունի իր առանձնահատկությունները և առաջատար գործունեությունը: Կյանքի առաջին տարիներին երեխայի մեջ տեղի են ունենում ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև մտավոր բնույթի կարևոր փոփոխություններ: Նա ձգտում է ինքնուրույնության, ներաշխարհում կատարվում են հոգեբանական բարդ երևույթներ, որոնք բացահայտվում են տարբեր խաղերում: Յուրաքանչյուր խաղային հարաբերություն վերարտադրում է իրականության մեջ գոյություն ունեցող սոցիալական այնպիսի փոխհարաբերություններ, որոնց շնորհիվ լայն հնարավորություն է ստեղծվում երեխայի դաստիարակության համար: Երեխան ընդհանուր ընդօրինակումից անցնում է սոցիալական ազդեցությունների ընտրողական յուրացման, որի արդյունքում որակապես փոխվում է կապը հասարակության հետ: Մեծահասակի նպատակաուղղված ներգործությունների շնորհիվ երեխան խաղի միջոցով յուրացնում է սոցիալական մեծ արժեք ունեցող բարոյական որակներ՝ ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն, ազնվություն, հայրենասիրություն, կազմակերպվածություն և այլն:

Խաղի դաստիարակչական նշանակության և հայեցի դաստիարակության հիմնահարցը կարևորվել է նաև բազմաթիվ հայ գրողների, մանկավարժների, հոգեբանների, մտածողների կողմից:

Խաղը գործողություն է, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում, որպես ուսոցողական, ստեղծագործական գործիք: Խաղը ոչ աշխատանք է, ոչ էլ արվեստ:

Առաջին խաղերը հայտնվել են մարդու առաջացումից առաջ՝ կենդանիների մոտ: Խաղերն առավել զարգացած են կապիկների մոտ՝ նրանք օգտագործում են ոչ միայն այն խաղերը, որոնք կապված են որոշ ծեսերի հետ, այլև նրանք, որոնք նույնական են մարդկանց խաղերին: Մարդկությունը խաղեր խաղացել է դեռ նախնադարյան ժամանակներից: Սկսած ծիսակատարություններից, քաղաքակրթության զարգացման հետ մեկտեղ խաղերը դարձան ավելի բարդ և ստեղծվեցին խաղեր գրեթե ցանկացած թեմայով՝ սեր, պատերազմ, երևակայություն, պատմություն, ուսուցում:

Զարգացնող խաղերի տեսակները: Առանձնացվում են մի քանի տեսակի խաղեր, որոնք հաջորդում են իրար՝ երեխայի զարգացմանը զուգընթաց: Այդ խաղերն են.

- **Ֆունկցիոնալ խաղեր**

Ֆունկցիոնալ խաղերի հիմնական դրդապատճառը հաճելի հույզեր ունենալն է՝դիտվում է մարդու ողջ կյանքի ընթացքում, բայց որպես առաջատար տեսակ պահպանվում է մինչև երկու տարեկան հասակը: Ֆունկցիոնալ խաղերի մնացորդներից է համարվու խոսելիս որևէ առարկա խաղացնելը:

- **Սիմվոլային խաղեր**

Ֆունկցիոնալ խաղերից անցում է կատարվում սիմվոլային խաղերի: Սիմվոլիկ խաղերն այն խաղերն են, երբ մի առարկային վերաբերում են որպես ուրիշի, որը տվյալ պահին գոյություն չունի: Օրինակ, երբ երեխան վերցնում է փայտը, հեծնում և վերաբերվում դրան ինչպես ձիու: Ենթադրվում է, որ հենց այս խաղերում է երեխայի մոտ ձևավորվում և ամրապնդվում հաջորդականությունն ըմբռնելու կարողությունը:

_https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B2

Խաղեր ըստ կանոնների

Այս խաղերը երեխաների մոտ ձևավորում են կանոններին ենթարկվելու, կարողություն, խաղն ունենում է կանոններ և բոլորը ենթրկվում են դրանց:

- **Ուսումնական խաղեր**

Առանձնացվում է նաև ուսումնական խաղը, որը օգտագործվում է որպես ուսուցման և դաստիարակության միջոց: Ուսումնական խաղի անվան տակ պետք է նկատի ունենալ այնպիսի գործունեություն, որի ընթացքում երեխաները ստանում են որոշակի գիտելիքներ և ունակություններ: Ուստի ուսումնական խաղը նախատեսվում է ուսուցանելու համար:

Գոյություն ունեն նաև խաղի **կանոններ**, որոնց հետևելու մշակույթը պետք է ձևավորել երեխաների մոտ: Երեխաներն ապագա քաղաքացիներ են, ովքեր պետք է լինեն օրինապահ, իսկ դա պետք է ձևավորել վաղ շրջանից: Երբ երեխաները սկսում են հետևել խաղի կանոններին, դա հող է հանդիսանում այն բանին, որ նրանք ապագայում կլինեն նաև օրինապահ քաղաքացիներ:

https://marinehakobyanblog.wordpress.com/2018/04/10/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%AF/

Աբովյանը[1] պահանջում էր չզրկել երեխային «անմեղ խաղերից»: Իր բնական զարգացման ընթացքում՝ առօրյա կյանքում, ամենօրյա գործունեության ընթացքում երեխան ամենից առաջ առնչվում է խաղին: Խաղալ նշանակում է գործել, ստեղծագործաբար վերարտադրել կյանքում ստացած տպավորությունները, շփվել շրջապատի մարդկանց, ընկերների հետ, վերջիններիս և իր իսկ այս կամ այն արարքին տալ գնահատականներ: Խ. Աբովյանն առանձնահատուկ նշանակություն էր տալիս երեխայի խաղային գործունեության բանականության կողմին, ինչպես նաև խաղի՝ անփոխարինելի գեղագիտական նշանակությանը:

Խաղերը զարգացնում են միտքը, բարձրացնում ինտուիցիան, օգնում են արագ կողմնորոշվել, դրական են ազդում հիշողության, ստեղծագործական երևակայության զարգացման վրա:

Դերային խաղը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է: Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում դիտում են որպես համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:

Խաղը եղել է ժողովրդական մանկավարժության ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը: Յուրաքանչյուր դերային խաղ ունեցել է իր նշանակությունը ու նպատակադրումը: Դրանով ժողովուրդը մատաղ սերնդին աստիճանաբար վարժեցրել ու նախապատրաստել է կյանքին՝ նրան փոխանցելով որոշակի հմտություններ:

Երեխաներին սովորեցնել ինքնուրույն ընտրել խաղի թեման, զարգացնել սյուժեն (ընտանիք, մանկապարտեզ, դպրոց, աշխատանք ու հանգիստ, հասարակական կյանքի իրադրություններ)։ Սովարեցնել ի մի բերել տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքները և դրանք օգտագործել խաղի ընթացքում։ Խթանել խաղի թեման նախապես համաձայնեցնելու, դերերը բաժանելու ջանքերը։ Սովորեցնել խաղերում առավել ամբողջական ու ճշմարտացի պատկերացնել կյանքը, ավելի համարձակ համադրել կյանքում տեսածը լսածի հետ, յուրովի փոխել իրական դեպքերն ու թեմայի բովանդակությունը, կազմակերպել առարկայական – տարածական նախնական իրադրություն 3-4 հոգուց բաղկացած խաղային խմբի համար։

Խաղի կազմակերպման փուլում, անհրաժեշտության դեպքում նաև խաղի ընթացքում, օգնել երեխաներին ըմբռնելու դերի հետ կապված հարաբերությունների իմաստը,կողմնորոշել նրանց խաղային դերին համապատասխան,դրսևորել այնպիսի հատկությունները ինչպիսիք են՝կարեկցանքը,փոխօգնության ձգտումը,հոգատարությունը,դժվարություններ հաղթահարելը,դաստիարակել համատեղ խաղերում պատասխանատվություն սեփական վարքի նկատմամբ։

[1]https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B9%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D6%80_%D4%B1%D5%A2%D5%B8%D5%BE%D5%B5%D5%A1%D5%B6

Զ. Գրիգորյան, Լ. Հարոյան, Խաղի դաստիարակչական նշանակության արժեորումը Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում, էջ 502

Երեխաները պետք է կարողանան ընտրել և փոխել խաղալիքները, առարկաները, տարբեր օժանդակ նյութերով ստեղծել խաղի համար հարմարություններ, կահավորանք, որոնք համապատասխանում են թեմային: Երեխաները պետք է կարողանան խաղի համար կատարել կառուցումներ (նավահանգիստ, կամուրջ, կայարան, երկաթուղի, տաղավար և այլն):

Հայրենասիրական խաղերը նպաստում են տղաների առնականության ձևավորմանը: Հնարավորին չափով այդ խաղերին պետք է մասնակից դարձնել նաև աղջիկներին: Ընտանիք պատկերող խաղերի միջոցով ձևավորվում են երեխաների սեռին համապատասխան հատկություններ: Ընտանիք պատկերող խաղերի միջոցով երկու սեռերի երեխաներին անհրաժեշտ է հաղորդել ճիշտ պատկերացումներ ապագա ընտանեկան կյանքի մասին:

Գլուխ 2

Հետազոտական ընթացք

ՈՒսումնասիրելով թեմայի տեսական մասը՝ կատարել եմ հետազոտական աշխատանք։

Հետազոտական աշխատանքը կատարել եմ միջին խմբի սաների հետ։

Թեման՝ Դ. Դեմիրճյան՝ 《Պույ_պույ մուկիկը》

Խնդիրները

Ձևավորել ստեղծագործական հերոսի նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու ունակություն, համեմատել իրեն գրքի հերոսի հետ /հաղթահարել դժվարությունները, ելք գտնել անելանելի վիճակներից՝ լինել հնարամիտ, լինել համբերատար..../։

Սովորեցնել կառուցել քերականորեն ճիշտ, արտահայտիչ և բովանդակալից խոսք։

Զարգացնել տրամաբանական մտածողությունը, եզրահանգումներ, համեմատություններ, կանխագուշակումներ կատարելու և հարցեր տալու կարողությունները։

Մշակել ստեղծագործական մտահղացումներով հեքիաթի համար նոր ավարտ հյուսելու կարողություն։

Անհրաժեշտ պարագաներ՝ Դ. Դեմիրճյանի 《Պույ_պույ մուկիկը》 նկարազարդ գիրքը, մկնիկի գլխարկ, կոկոս։

Դաստիարակը երեխաների հետ նստում է մի հարմարավետ տեղ, օրինակ՝ գորգի կամ ցածր աթոռների վրա, այնպես, որ բոլորին տեսանելի լինի գիրքը։ Ցուցադրում է Դ. Դեմիրճյանի 《Պույ_պույ մուկիկը》 նկարազարդ գիրքը և ներկայացնում գրողին ու ձևավորող նկարիչին։ Ապա շատ դանդաղ շրջում է գրքի էջերը, որ բոլորը հնարավորություն ունենան դիտելու նկարները։

_Ձեր կարծիքով, ինչի՞ մասին է այս գիրքը։ Ծանո՞թ եք, արդյոք, գրքի հերոսին։

Նմանատիպ բաց հարցերը խթանում և ակտիվացնում են երեխաների նախնական գիտելիքները, օգնում ի մի բերել և կիրառել իմանալը, ինչպես նաև սովորել միմյանցից։

Դա նաև հետաքրքրություն է առաջացնում ընթերցվող պատմության հանդեպ կտրամադրում է նրանց հաճույքով լսելու պատմությունը։Դաստիարակը կարող է առանձին թղթի վրա գրառել մի քանի երեխաների անունները և պատասխանները։ Այս կանխագուշակումների միջոցով խրախուսվում է երեխաների՝ կռահելու կարողությունը։

Դաստիարակն ընթերցում է գիրքը՝ հանգիստ, դանդաղ տեմպերով, առոգանությամբ, մատը սահեցնելով տողի վրայով։

Ամբողջ պատմությունն ընթերցելուց հետո անդրադառնալ՝ կռահումներին, որոնք գրանցել էիք թղթի վրա , և մեկնաբանել, թե ում կողմից արված կռահումներն էին համապատասխանում գրքի բովանդակությանը։

Այնուհետև դաստիարակը կրկին երեխաների ուշադրությունը հրավիրում է գրքի բովանդակության վրա և նրանց ուղղում մի քանի բաց հարցեր.

_Գրքի ո՞ր մասն ավելի շատ դուր եկավ և ինչու՞։

_Ո՞ր նկարը հավանեցիք ամենից շատ։

_Ինչպե՞ս կվարվեիք , եթե հայտնվեիք գլխավոր հերոսի դերում։

_Ի՞նչ բառերով կբնութագրեիք մկնիկին։

Առաջարկել դերային խաղի միջոցով ներկայացնել մկնիկի տրամադրությունը կոկոսի մեջ և կոկոսից դուրս։

Փորձել երեխաների հետ գտնել հեքիաթի ավարտի , ելքերի նոր որոնումներ ու բացահայտումներ և բեմականացնել այն։ Երեխաները կարող են ձևափոխել , շրջել, վերակառուցել հեքիաթի բովանդակությունը, մտնել հեքիաթի մեջ , կասեցնել վտանգը , փրկել հերոսին...։

Մեր պարապմունքին ներկա են եղել մեր մանկապարտեզի տնօրենը և երեք դաստիարակ։Նրանք իրենց կարծիքն են հայտնել անցկացվող պարապմունքի վերաբերյալ։

Այս պարապմունքը երեխաներին հնարավորություն տվեց ելք գտնել անելանելի վիճակներից։ Այն հնարավորություն տվեց երեխաներին ձևավորել սեփական վերաբերմունքն արտահայտելու ունակություն։ Երեխաները ինտեգրվել էին ամբողջությամբ։ Սեփական ապրումները հիշվում են երկար և մանրամասն։ Դերային խաղի միջոցով երեխաները բացահայտեցին իրենց ընդունակությունները։ Ընտրված թեման ճիշտ էր այս տարիքի երեխաների համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դերային խաղի կազմակերպման և անցկացման դեպքում անհրաժեշտ է կարևորել նրա ընթացքի ճիշտ կազմակերպումը և խաղի արդյունքների ամփոփումը։

Մեր կողմից կազմակերպած դերային խաղը նպաստեց երեխաների ուշադրության զարգացմանը, քանի որ խաղում էին բոլորը միաժամանակ և միևնույն նպատակին հասնելու ցանկությամբ։

Անչափ կարևոր էր խաղալիս երեխայի զգայական ազատությունը, քանի որ նա ազատ կերպով առանց որևէ սահմանափակման դրսևորում էր իր զգացողությունները՝ դրական ու բացասական։

Դերային խաղը չէր սահմանափակում երեխայի ինքնուրույնությունը, քանի որ տրվում է նրան ազատ հնարավորություն, որ արտահայտի իր կարծիքը, հատկապես իր դրական կամ մերժողական վերաբերմունքը իր տեսածի և կատարածի մասի։

Արդյունքում երեխայի մոտ ստեղծագործական երևակայությունը զարգանալու հնարավորություն է ստեղծվում, որն էլ համադրվելով խաղի հետ նպաստում է ուսուցման մեջ երեխաների լիարժեք ներգրավվելուն։ Իսկ վերջինս տանում է երեխայի ակտիվության բարձրացման։

Ուսուցման գործընթացում այս խաղի կիրառումը մեր կողմից նպատակ ուներ իրոք բարձրացնել երեխաների անհատական ակտիվությունը՝ որպես նրանց գործունեության վերջնարդյունք։ Մենք ամփոփեցինք խաղի ավարտը և հաստատուն ձևով հասանք դրան։

Այսպիսով պարզ է դառնում, որ խաղը երեխայի կյանքում ունի անփոխարինելի նշանակություն։ Հատկապես դերային խաղը դառնում է երեխայի համակողմանի զարգացման ու ակտիվության հզոր միջոց։

Դերային խաղը զարգացնում է երեխայի միտքը, նպաստում վռ երևակայության զարգացման, ինչպես նաև ներըմբռնման (ինտուիցիայի) բարձրացմանը։ Օգնում է,

որպեսզի երեխան արագ և ճիշտ կողմնորոշվի և լուծի իր առջև դրված խնդիրը կամ դժվարությունը։ Սա նրան դարձնում է կենսունակ ամբողջ կյանքի ընթացքում։

Դերային խաղը ապահովում է երեխայի հիշողության զարգացումը, ինչը նույնպես շատ կարևոր է։

Այս ամենից ելնելով կարող ենք ասել, որ խաղը՝ որպես երեխայի առաջատար գործունեության՝ զարգացման ու դաստիարակության լավագույն արդյունք ապահովող միջոց է։ Դերային խաղը երեխայի կյանքում դիտվում է որպես համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց։ Նույնիսկ անհամարձակ երեխան խաղալիս իրեն ազատ է զգում, կարող է անսահմանորեն ստեղծագործել։

Համակողմանի խնդիրների լուծումը ինձ հնարավորություն տվեց հասնել իմ առջև դրված նպատակների իրագործմանը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B9%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D6%80_%D4%B1%D5%A2%D5%B8%D5%BE%D5%B5%D5%A1%D5%B6

2. Զ. Գրիգորյան, Լ. Հարոյան, Խաղի դաստիարակչական նշանակության արժևորումը Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում, էջ 502

3. https://marinehakobyanblog.wordpress.com/2018/04/10/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%AF/

4. _https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B2